



Էկոլոգիական հասարակական դաշինք

ՀՀ Քաղաքաշինության նախարար
պարոն Ս.Թադևոսյանին

Կրկնօրինակը

ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների
նախարար՝ պարոն Ա.Մովսիսյանին

ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարար
պարոն Ա.Երիցյանին

ՀՀ Բնապահպանության նախարար պարոն
Ա. Հարությունյանի

ՀՀ Առողջապահության նախարար պարոն
Դ.Դումանյանին

Հարգելի պարոն նախարար

<<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀօրենքի 6-րդ, 9-րդ և 12-րդ հոդվածների համաձայն խնդրում եմ տրամադրել հետևյալ տեղեկատվությունը.

1. «Մեզո Գոլդ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված և 2006 թ. հուլիսի 7-ին թիվ ԲՓ-71 դրական եզրակացություն ստացած՝ ՀՀ Արագածոտնի մարզի Թուխմանուկի ոսկու հանքավայրի կենտրոնական տեղամասի բաց եղանակով (2 տարի ժամկետով) հանքարդյունահանման աշխատանքային նախագծի պատճենը:

2. ՀՀ Արագածոտնի մարզի Թուխմանուկի ոսկու հանքավայրի շահագործման նպատակով «Մեզո Գոլդ» ՍՊ ընկերության կողմից ՀՀ բնապահպանության նախարարություններ կայացված (եթե այդպիսիք կան) բոլոր այլ նախագծերի (ստորգետնյա շահագործման, պոչամբարի, հանքհարստացուցիչ ֆաբրիկայի և այլն), ինչպես նաև առկայության դեպքում դրանց վերաբերյալ տրված եզրակացությունների պատճենները:

Հայտնում եմ նաև, որ անհրաժեշտության դեպքում պատրաստ եմ վճարել պատճենահանման ծախսերը:

Հարգանքով՝ Էկոլոգիական հասարակական դաշինքի համակարգող՝ Ս.Ադամյան

5.02.2014

